ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2026 թվականի N 7256-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՔԱՅԼԻ ՉԱՓԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ ապրիլի 12-ի թիվ 286 և 2023թ հոկտեմբերի 10-ի N 1667-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 11-ի 289-Ա որոշումը՝ որոշում եմ.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի՝ 03-083-0019-0059, 03-085-0011-0043 , 03-085-0011-0047 , 03-085-0011-0048, 03-035-0038-0027, 03-070-0072-0063 , 03-070-0116-0029 , 03-070-0246-0017, 03-079-0017-0007, 03-083-0019-0030, 03-035-0003-0008, 03-054-0012-0078, 03-054-0294-0024, 03-067-0056-0004, 03-083-0108-0028, 03-003-0424-0286, 03-070-0062-0050, 03-003-0074-0057, 03-003-0296-0537, 03-012-0743-0004, 03-033-0023-0055 վաճառքը էլեկտրոնային աճուրդային եղանակով անցկացնել 2026 թ. նոյեմբերի 10-ից նոյեմբերի 12-ը:

2. 2026 թ. նոյեմբերի 10-ից նոյեմբերի 12-ը համայնքապետարանում կայանալիք աճուրդի քայլի չափը հաշվարկել ելնելով լոտի մեկնարկային գնից, սահմանվում են մեկնարկային գնի նվազագույն հավելման հետևյալ չափերը՝

1) լոտի մեկնարկային գնի մինչև 100.000 դրամի դեպքում նվազագույն հավելման չափը սահմանվում է 500 դրամ.

2) լոտի մեկնարկային գնի 100.001-500.000 դրամի դեպքում՝ 1.000 դրամ.

3) լոտի մեկնարկային գնի 500.001-1.000.000 դրամի դեպքում՝ 10.000 դրամ.

4) լոտի մեկնարկային գնի 1.000.001-10.000.000 դրամի դեպքում՝ 50.000 դրամ.

5) լոտի մեկնարկային գնի 10.000.000-ից ավելիի դեպքում՝ մեկնարկային գնի 1 %-ի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ**

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
Ք.ՄԱՍԻՍ